# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
## N ԱՊՁԲ-11/ 2 - 2015
### 10.12.2014թ. թիվ N ԱՊՁԲ- 11/359-2014 պայմանագրի

«21» 01 2015թ.

ք. Երևան

ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «ՀՀ մամուլի տարածման գործակալություն» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն Ա. Մխիթարյանի (այսուհետև՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրի 1.1.1, 4.1.1 և 9.3 կետերի համաձայն Կողմերը համաձայնության են եկել 10.12.2014թ. թիվ ԱՊՁԲ-11/359-2014 պայմանագրի 4.1.1 կետում նշված գնի՝ **19 827 600/ տասնինը միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամի** պարտավորությունները կստանձնվեն և մատակարարումները կիրականացվեն սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու պահից:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է թիվ ԱՊՁԲ-11/359-2014 պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրը կնքելը կողմերի միջև 2015թ-ի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4 օրինակից, յուրաքանչյուր օրինակը 1 թերթից:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱԱ ծառայություն<br>ք.Երևան, Նալբանդյան104<br>ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն | «ՀՀ մամուլի տարածման գործակալություն» ՓԲԸ<br>ք. Երևան, Սասունցի Դավթի հրապարակ 2<br>«Արարատ բանկ» ՓԲԸ |
| Հ/h 900011301067<br>ՀՎՀՀ 01507079 | Հ/h 1510001986720100<br>ՀՎՀՀ 00401345 |
| Տնօրենի տեղակալ<br>Ա. Հակոբյան | Տնօրեն<br>Ա. Մխիթարյան |